

XIX ԴԱՐԻ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՅՑ
(Հիմնական աղբյուրները և նպաստող ու արգելակող գործոնները)

Ա. Կ. ԲԱՐԵՋԻՋՅԱՆ

Աչքի անցկացնելով հայոց լեզվի գրավոր ժամանակաշրջանի պատմությունը՝ V դարից մինչև մեր օրերը, գալիս ենք այն համոզման, որ լեզվամշակութային բազմաբնույթ առնչությունների մեջ իրենց չափերով, վերջնարդյունքով և ընդհանուր քաղաքակրթական նշանակությամբ առանձնանում են հատկապես երեքը՝ հայ-հունականը, հայ-ֆրանսիականը և հայ-ռուսականը:

Հայտնի է, որ հայոց գրերի գյուտից հետո (405 թ.) Հայաստանում ծավալվեց կրթական ու թարգմանչական վիթխարի գործունեություն: Ուսումնատենչ երիտասարդները հունական քաղաքակրթության ու լուսավորության կենտրոններ Աթենքում, Բյուզանդիոնում և Ալեքսանդրիայում տիրապետեցին հունարենին և, աշակերտելով ժամանակի նշանավոր գիտնականներին, հիմնավոր կրթություն ստացան: Գիտությամբ ու առաջադեմ գաղափարներով տոգորված այդ երիտասարդները նվիրվեցին մշակութային-թարգմանչական եռանդուն գործունեության, որն իր հետքը թողեց հայ մտքի և լեզվի վրա:

Հայ-ռուսական տնտեսական, առևտրական և մշակութային առնչությունների հնագույն արտահայտությունների մասին արձանագրումներ կան դեռևս վաղ միջնադարյան աղբյուրներում: XVI դարից այդ հարաբերություններն սկսում են ծավալվել, իսկ XVII—XVIII դարերում գնալով ամրանում են: Հայաստանի արևելյան շրջանները Ռուսաստանին միացվելուց հետո (1828 թ.) հայ գրականության, մշակույթի ու լեզվի զարգացումը սերտորեն առնչվում է ռուս գրականությանն ու ռուսական մտքի նվաճումներին: XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հայ-ռուսական կապերն ավելի են ընդարձակվում, իսկ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ընդգրկում են հասարակական-քաղաքական կյանքի, գիտության, լուսավորության ու մշակույթի բոլոր բնագավառները:

Եթե հայ ժողովրդի արևելյան հատվածի ու նրա լեզվի վրա որոշակի ներգործություն են ունեցել ռուս գրականությունն ու ռուսաց լեզուն, ապա արևմտահայության կյանքում նույնպիսի դեր են խաղացել ֆրանսիական գրականությունն ու ֆրանսերեն լեզուն, հատկապես՝ XIX դարում: Սակայն եթե հայ-հունական և հայ-ռուսական լեզվական կապերը դարձել են ամենատարբեր բնույթի ու ծավալի ուսումնասիրությունների նյութ, ապա հայ-ֆրանսիական լեզվական կապերը շոշափվել են ընդհանուր բնույթի աշխատություններում: Մինչդեռ, անցյալ դարում ֆրանսիական մշակույթի հետ հայ մտքի, գրականության ու լեզվի ունեցած կապն առանձնահատուկ ուշադրության է արժանի թե՛ իր ծավալով և թե՛ արդյունքով: Այս շրջանում է, որ աննախընթաց զարգացում է ապրում գրական-մշակութային կյանքը: Լայն թափ են ստանում բառարանագրությունը, թարգմանական գրականությունը, մամուլն ու լուսավորությունը: Մտավորականությունն ավելի ու ավելի է հաղորդակցվում եվրոպական, մասնավորապես՝ ֆրանսիական առաջավոր քաղաքակրթությանը, որն իր դրական ազդեցությունն է թողնում ազգային մշակույթի ու լեզվի վրա: Հայոց լեզուն ֆրանսերենից կատարում է փոխառություններ և անհամեմատ ավելի՝ պատճենումներ: Այս ճանապարհով հա-

յերենի բառապաշարն ու իմաստային համակարգը հարստանում են նորանոր բառերով, կայուն բառակապակցություններով ու առանձին իմաստներով՝ առավելապես ֆրանս-հայերեն բառարանագրության ու թարգմանական գրականության շնորհիվ։ Այս երկու կարևոր բնագավառների մասին որոշ պատ-
յիբրացում տալու համար նախ ներկայացնենք XIX դարում լույս տեսած ֆրանսերեն-հայերեն կարևորագույն բառարանների ցանկը՝ համառոտ տրվ-
յալներով (տե՛ս աղյուսակը)։

Աղյուսակ

Հեղինակ	Վերնագիրը	Բառա- հոգված- ների թիվը	Հրատա- րակու- թյան թվականը	Հրատա- րակու- թյան վայրը
1. Ալգերեան Յարութիւն	Բառարան համառոտ ի գաղղիա- կանէ ի հայ	25000	1812	Վենետիկ
	2-րդ հրատ., Բառգիրք ի գաղ- ղիականէ ի հայ և ի տաճիկ	35000	1840	Վենետիկ
2. Էմիլեան Արապիոն	Երեքլեզուան բառագիրք ալ- սինքն գաղղիերէն-հայերէն-տաճ- կերէն	45000	1853	Վիեննա
	2-րդ հրատ. նույն վերնագրով	47000	1871	Վիեննա
3. Բյուղանդացի Նորայր	Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն	50000	1884	Կ. Պոլիս
4. Գանթարեան Սամուէլ	Բառարան գաղղիերէն-հայերէն- տաճկերէն	30000	1888	Վենետիկ
5. Նուպարեան Մեսրոպ	Բառարան ֆրանսերէնէ-հայերէն- աշխարհիկ	40000	1889	Կ. Պոլիս
	2-րդ հրատ. նույն վերնագրով	40000	1892	Կ. Պոլիս
6. Քաշունի Մանուէլ	Բառգիրք արուեստից և գիտութե- անց և գեղեցիկ դպրութեանց	Հ.1 11000 Հ.2 14000	1891 1892	Վենետիկ Վենետիկ
7. Տէմիրճիպաշեան Եղիա	Բառարան ֆրանսերէնէ-հայերէն	40000	1896	Կ. Պոլիս
8. Երեմեան Սիմոն	Պատկերազարդ բառագիրք գործ- նական գիտութեանց	4000	1900	Վենետիկ
9. Լուսինեան Գուրտոն	Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ Հ. Ա., Հ. Բ	120000	1900	Փարիզ

Վերոհիշյալ բառարաններից մի քանիսը վերահրատարակվել են նաև
XX դարում, մի փաստ, որ վկայում է դրանց արժեքավոր ու պիտանի լինելու
մասին։ (Ս. Գանթարյան, Վենետիկ, 1912։ Մ. Նուպարյան, Բեյրութ, 1955։
Ի. Տեմիրճիպաշյան, Կ. Պոլիս, 1930, Հ. Մսրյանի խմբագրությամբ, որն
աշխատությունը հարստացրել է 10000 բառահոգվածով։ Գ. Լուսինյան, Կ. Պո-
լիս, 1909—1910)։

XIX դարի ֆրանս-հայերեն բառարանագրության ուսումնասիրությունը
ցույց է տալիս, թե ֆրանսերենի հետ ունեցած շփման մեջ ինչպես է հղկվել
ու մշակվել երկլեզվյան բառարանագրությունը, զարգացել ու հարստացել
հայերենի բառապաշարը։ Այսօր, թերթելով XIX դարի ֆրանսահայ բառա-
րանագրության էջերն ու հսկայածավալ նյութը, կարող ենք հավաստել, որ
նրա կշիռը հայոց լեզվի ու մշակույթի առաջընթացի մեջ զգալիորեն ավելին
է, քան ներկայացվել է մինչև այժմ։

Հայ-ֆրանսիական լեզվական կապերի ուսումնասիրության երկրորդ կարևոր բնագավառը թարգմանական գրականությունն է, որը հայ գիտական ու մշակութային կյանքի անբաժան ուղեկիցն է եղել նրա գոյության բոլոր շրջաններում: Ահա թե ինչպես է բնութագրում Ա. Չոպանյանը հայ-ֆրանսիական գրական ու լեզվական կապերը XIX դարում. «Եվրոպական գրականությունների շարքում իտալականն ու անգլիականը բավական նշանակալի բաժին են ունեցել հայ մտքի վրա թողած ազդեցության տեսակետից: Արևելահայերի մոտ, Կովկասը Ռուսաստանին միացվելուց հետո, զգալի է եղել ռուս և գերմանական գրականությունների ներգործությունը: Սակայն ամենածավալունն ու ամենախորը՝ ֆրանսիական գրականության թողած ազդեցությունն է, մասնավորապես արևմտահայերի վրա, որոնց համար Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի մեծ գաղթօջախները XIX դարում դարձան մտավոր գործունեության կենտրոններ: Վենետիկում հաստատված մխիթարյաններն առավել մեծ չափերով թարգմանեցին ֆրանսիական, քան եվրոպական որևէ այլ գրականության գլուխգործոցներ: Ֆրանսիական մշակույթի հետ հայ մտքի ունեցած կապը, որ սկիզբ էր առել խաչակրաց արշավանքների շրջանում, ավելի ու ավելի ամրացավ XVIII և մանավանդ XIX դարում: Աշխարհաբար հայերենը հարստացավ, հղկվեց ու ճկունացավ գրական գլուխգործոցների թարգմանության ճանապարհով ֆրանսերեն լեզվի հետ ունեցած շփման մեջ, ճիշտ այնպես, ինչպես դասական հայերենն իր գեղեցկության ու հարստության գագաթնակետին էր հասել շնորհիվ հունական տեքստերի թարգմանության»¹:

Ուշագրավ է, որ XIX դարում ֆրանսերենից թարգմանվել են ամենատարբեր ժանրերի ու ծավալի գործեր՝ վեպ, պատմվածք, նովել, պիես, բանաստեղծություն, ճառ, բանախոսություն, դասագրքեր ու գիտական աշխատություններ, ֆրանսիական գրականության հատրնտիրներ և այլն: Շատ գործեր հրատարակվել են մեկից ավելի անգամներ կամ ունեցել տարբեր թարգմանություններ, որով հաստատվում է դրանց նկատմամբ եղած հետաքրքրությունը:

1883 թ. լույս տեսավ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Գարեգին Զարպանալյանի «Հայկական մատենագիտությունը»², որն իր տեսակի մեջ առաջին գործն է և ամփոփում է 1565—1883 թթ. հայ գրքի ընդհանուր մատենագիտությունը:

1904 թ. սկսեց պրակ առ պրակ լույս տեսնել Վենետիկի Մխիթարյան միաբանության մեկ այլ անդամի՝ Արսեն Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» աշխատությունը, որն ընդգրկելու էր հայ տպագրի գիրքը 1512-ից մինչև 1905-ը, մասամբ նաև նյութեր պարբերական մամուլից: Տեղեկատվական ճշգրտությամբ ու հարուստ բովանդակությամբ աչքի ընկնող այս պատկառելի աշխատության հրատարակությունը, դժբախտաբար, անավարտ մնաց, քանի որ մեծ եղեռնի օրերին Պարտիզակում (գյուղ Արևմտյան Հայաստանում) կորավ ձեռագրի մնացած մասը: Այսօր ձեռքի տակ ունենք Ա. Ղազիկյանի տասնչորս տարիների տքնաչափ աշխատանքի արդյունքը հանդիսացող մատենագիտության առաջին հատորը միայն (Ա—Մ)³:

Վերահիշյալ երկու մատենագիտություններից քաղված տվյալները հաստատում են, որ XIX դարում ֆրանսերենից թարգմանված տպագրի գործերն, իրոք, պատկառելի թիվ են կազմում՝ 225 անուն, որոնց զգալի մասը ծավալուն գրքեր են կամ մեկից ավելի հատորներից բաղկացած գրական ու գի-

¹ A. Tchobanian. Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne. Paris, 1935, pp. 67—68.

² Գ. Զարպանալյան. Հայկական մատենագիտություն. Վենետիկ, 1883.

³ Ա. Ղազիկյան. Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի. Վենետիկ, 1909—1912.

տական աշխատություններ: Սակայն, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Գ. Զարպհանայանի մատենագիտությունն ամբողջական չէ և ընդգրկում է մինչև 1883 թ. ընկած ժամանակաշրջանը, իսկ Ա. Ղազիկյանի աշխատությունը կիսատ է մնացել, ապա պարզ կդառնա, որ դրանց տվյալներն սպառիչ համարվել չեն կարող, և թարգմանությունների թիվն, անշուշտ, ավելին է: Մեր հաշվումներով XIX դարում՝ միայն արևմտահայերի կողմից, ֆրանսերենից թարգմանված երկերի ընդհանուր ծավալը կազմում է առնչվազն 60000 էջ, որը կրկնակի անգամ գերազանցում է եվրոպական մյուս լեզուներից (իտալերենից, գերմաներենից, անգլերենից) կատարված թարգմանությունները միասին վերցրած: Այս մոտավոր թիվը ճշտելու համար նշված մատենագիտություններից բացի օգտագործել ենք նաև Հայկական սովետական հանրագիտարանի 12 հատորների, Գառնիկ Ստեփանյանի «Կենսագրական բառարանի» Ա և Բ հատորների⁴ և հանրապետության գրադարանային քարտարանների նյութերը, իսկ առանձին, ոչ առկա թարգմանությունների ծավալը որոշելու համար, նաև՝ բնագրերի տվյալները: Թարգմանությունների մեծագույն մասը՝ մոտ 95 տոկոսը, լույս է տեսել XIX դարի երկրորդ կեսին:

Վերոհիշյալ աղբյուրներից երևում է, որ XVIII դարի համեմատությամբ XIX դարում՝ ա) շեշտակիորեն ավելանում է թարգմանությունների թիվը, բ) լատիներենից թարգմանություններին փոխարինելու են գալիս եվրոպական նոր լեզուներից կատարվածները և գ) գրաբարը գնալով իր տեղը զիջում է աշխարհաբարին, որը և դառնում է թարգմանությունների հիմնական լեզուն: XIX դարի երկրորդ կեսը իրավամբ կարելի է համարել համատարած աշխարհաբարացման շրջան, որն ընդգրկել էր նաև թարգմանությունների ոլորտը:

Թարգմանված գործերի ընդհանուր ցանկում քիչ չեն ֆրանսիացի նշանավոր հեղինակների գլուխգործոցներն ու ճանաչված երկերը: Հիշատակենք այդ հեղինակների ոչ լրիվ ցանկը. Պիեռ Կոռնել, Ժան Լաֆոնտեն, Ժան-Բատիստ Մոլիեր, Ժակ Բոսյուե, Ժան Ռասին, Շառլ Ռուլեն, Ֆրանսուա Ֆենելոն, Ալեն Լըսաժ, Ֆրանսուա Վոլտեր, Աբբա Պրեո, Պիեռ Օգյուստեն Բոմարշե, Բեռնարդեն դը Սեն-Պիեռ, Ֆրանսուա Ռենե Շատոբրիան, Ալֆոնս դը Լամարթին, Ալեքսանդր Դյումա, Ալեքսանդր Դյումա որդի, Վիկտոր Հյուգո, Ալֆրեդ դը Մյուսե, Էժեն Սյու, Պրոսպեր Մերիմե, Քեոֆիլ Գոթիե, Լըկոնտ դը Լիլ, Ժյուլ Վեռն, Հեկտոր Մալո, Լյուդովիկ Հալևիլ, Ֆրանսուա Կոպպե և ուրիշներ: Կարևոր է այն հանգամանքը, որ թարգմանիչները, շնորհիվ XVIII և XVIII դդ. ֆրանսիացի դասական հեղինակներին, առավելապես դիմել են իրենց ժամանակակիցների՝ XIX դարի հեղինակների ստեղծագործությունների թարգմանությանը, որի շնորհիվ բազմազար ընթերցողներ հաղորդակցվել են ժամանակի գրական ու գիտական նվաճումներին: Կան նաև քիչ հայտնի կամ գրեթե անհայտ գրողների, գեղարվեստական արժանիքներով աչքի չընկնող բազմաթիվ արկածային ու սիրային վեպերի, կատակերգությունների, մելոդրամաների, վոդևիլների և այլ ժանրի գործերի թարգմանություններ, որոնց ընթերցանության պահանջը բնական երևույթ էր: Թարգմանությունները հիմնականում լույս են տեսել Վենետիկում, Զմյուռնիայում և Կ. Պոլսում:

Հայ թարգմանիչների մեծ մասը ժամանակի անվանի գրողներ, բառարանագիրներ ու մտավորականներ էին, որոնք քաջատեղյակ էին հայոց լեզվին, գրականությանն ու մատենագրությանը: Նրանցից էին՝ Գաբրիել Այվազովսկին, Արսեն Բագրատունին, Սիմոն Գաբամաճյանը, Խորեն Գալֆայանը, Սամվել Գանթարյանը, Գվիտոն Լուսինյանը, Սրապիոն Հեքիմյանը, Գևորգ և Էդուարդ Հյուսիզյանները, Մատթեոս Մամուրյանը, Գրիգոր Մսերյանը, Մեսրոպ

4 Գ. Ստեփանյան. Կենսագրական բառարան. հ. Ա, Երևան, 1973. հ. Բ, Երևան, 1981:

նույնարյանը, Հովհաննես Չամուռճյանը, Գրիգոր Զիլինկիրյանը, Մանվել Զախչախյանը, Նահապետ Ռուսինյանը, Հարություն Սվաճյանը, Տիգրան և Հայկ Տետեյանները, Կարապետ Ություճյանը, Մանվել Քաջունին և ուրիշներ: Հատկապես բեղմնավոր է եղել Մ. Մամուրյանի, Գր. Զիլինկիրյանի և Կ. Ություճյանի թարգմանչական գործունեությունը:

Ինչպես բառարանագրության, այնպես էլ թարգմանչական գործունեության բնագավառում անգնահատելի ծառայություն ունեն Վենետիկի Մխիթարյանները: Պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ապրելով ու ստեղծագործելով Իտալիայում և անմիջական շփման մեջ լինելով իտալացիների հետ, նրանք XIX դարում և հատկապես նրա երկրորդ կեսին ավելի շատ թարգմանել են ֆրանսերենից, քան իտալերենից կամ եվրոպական որևէ այլ լեզվից: Սրանով կրկին անգամ հաստատվում է, որ նշված շրջանում արևմտահայ մտավորականության համար առաջատար օտար լեզուն ֆրանսերենն էր:

Ֆրանսիացի հեղինակների երկերն ու դրանց թարգմանությունները հավասարապես իրենց ազդեցությունն ունեցան ինչպես հայ գրականության, այնպես էլ հայ գիտական մտքի և հայոց լեզվի վրա: Անդրադառնալով XIX դարում և մանավանդ նրա երկրորդ կեսին եվրոպական հեղինակների վեպերի հայերեն թարգմանվելուն, Հ. Աճառյանը գրում է. «Մի ամբողջ գրականություն հայերենի վերածվեց: Ժողովուրդը կարդաց, լսեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ. ընթերցանությունը պահանջ դարձավ և այդ ընթերցասիրության արդյունքը եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը: Առանձին ուսումնասիրության նյութ է կազմում այս կարգի վեպերի թարգմանության և թարգմանիչների պատմությունը»⁵:

Այսպիսով, XIX դարի կեսերից, երբ գրական աշխարհաբարն աննախընթաց լայնացնում էր գործածության շրջանակները, միօրինականանում և դրվում մշակման հունի մեջ, թարգմանական գրականությունն իր որոշակի դերը կատարեց գրական արևմտահայերենի որակական լիակատար ձևավորման գործում: Ֆրանսիական գրականության ամենատարբեր նմուշների թարգմանության ընթացքում կատարված բառափոխառությունները և հատկապես նորաստեղծ բառերը հարստացրին հայոց լեզվի բառապաշարը: Բնականաբար, դրանց որոշ մասը մնաց թարգմանությունների շրջանակներում միայն: Սակայն քիչ չեն այն բառերը, որոնք մուտք գործեցին հայոց բառապաշարի գանձարանն ու ամրացան այնտեղ:

«Լուրջ բառարանագետի պարտականությունն է,— գրում է Հ. Աճառյանը,— հավաքել այս բոլոր տեսակի նորակերտ բառերը, հիշել նրանց հեղինակը, գործածված տեղն ու ժամանակը, մի խոսքով կազմել հայոց նորակերտ բառերի պատմությունը: Մեր գրողները բազմաթիվ ընտիր բառեր կազմեցին գիտությանց բոլոր ճյուղերի համար, ճիշտ ու ճիշտ թարգմանելով եվրոպական բառերը»⁶:

Ստորև զուգահեռաբար կանդրադառնանք բառապաշարի բնագավառում հայ-ֆրանսիական լեզվական կապերին նպաստող կամ դրանք արգելակող գործոններին XIX դարում: Դրանց բազմակողմանի ու համատեղ նկարագրությունը շահեկան համեմատություններից բացի նաև հնարավորություն կընձեռի պատասխանել այն կարևոր հարցին, թե նշված շրջանում ո՞րն է եղել հայոց լեզվի միտումը՝ թարգմանություն ու պատճենում, թե՞ փոխառություն: Ավելացնենք, որ թվարկվող գործոններն ընդհանրական արժեք ունեն լեզուների մեծ մասի համար:

Արտալեզվական գործոնների թվին ընդունված է դասել ժողովուրդների միջև զոյություն ունեցող քաղաքական, հասարակական-տնտեսական և գիտամշակութային կապերը, որոնք կազմում են տվյալ ժողովրդի ու նրա լեզվի ձևավորման ու զարգացման յուրահատուկ պայմանները: XIX դարում և հատ-

⁵ Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 2-րդ մաս, Երևան. 1951, էջ 496.

⁶ Նույն տեղում, էջ 485.

կապես նրա երկրորդ կեսին հայ-ֆրանսիական լեզվական կապերին նպաստող արտալեզվական գործոնները հիմնականում եղել են գրական-մշակութային ու գաղափարական-լուսավորական բնույթի:

Տեսնենք, թե որոնք էին դրանք:

1) Նախ այն, որ Պոլսի, Զմյուռնիայի ու Արևմտյան Հայաստանի մյուս քաղաքների և նույնիսկ գյուղերի հայկական դպրոցներում ֆրանսերեն լեզվի ուսուցում մտցվեց և Արևելքում ֆրանսիական դպրոցներ բացվեցին: Այդ շրջանում «ֆրանսերենը ուսման կատարելագույն աստիճան էր համարվում»⁷: Ֆրանսիական քաղաքակրթության հետ շփվելու նպատակով հայ երիտասարդներն սկսեցին մեկնել Ֆրանսիա, որտեղ իրենց ուսումը շարունակեցին ֆրանսիական համալսարաններում և Փարիզի Մուրադյան վարժարանում: Նրանցից էին Մերովբե Վիշնյանը, Նահապետ Ռուսինյանը, Նիկողայոս Զուրաբյանը, Հարություն Սվաճյանը, Նիկողոս և Կարապետ Պալանյանները, Հովսեփ Շիշմանյանը (Մերենց), Կարապետ Ություճյանը, Ստեփան Ոսկանը, Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ), Եղիա Տեմիրճիպաշյանը, Մատթեոս Մամուրյանը, Նշան Գալֆայանը, Հարություն Թիրյաքյանը, Սեպուհ Լազ-Մինասյանը, Ավետիս Խորասանճյանը, Ներսես Մեզպուրյանը և շատ ուրիշներ, որոնք ուսումնասիրում էին բժշկություն, իրավագիտություն, ճարտարապետություն, փիլիսոփայություն, տնտեսագիտություն, գրականություն, երաժշտություն, երկրագործություն և այլն: Նրանց զգալի մասն այնուհետև վերադարձավ հայրենի ծննդավայրն ու նվիրվեց ազգագույն աշխատանքի: Ֆրանսիայում կրթություն ստացած հայորդիները դարձան ժամանակի արևմտահայ մտավորականության ընտրանին՝ հասարակական գործիչներ, գրական, գիտական ու մշակութային կյանքի և լուսավորության բնագավառի ճանաչված դեմքեր: Քիչ չեն նաև նրանք, ովքեր կարճատև կամ տևական բնակություն հաստատեցին ու ստեղծագործեցին Ֆրանսիայում (Ն. Բյուզանդացի, Գ. Լուսինյան, Հ. Ասատուր և ուրիշներ):

Այսպիսով, հայկական դպրոցներում ֆրանսերենի դասավանդումը, Արևելքում ֆրանսիական դպրոցների բացվելը և ուսումնասիրումը նպատակով հայերի Ֆրանսիա մեկնելը դարձան այն ազդակները, որոնք պայմանավորեցին ֆրանսիական մշակույթի ու գրական լեզվի շոշափելի ազդեցության սկիզբը:

2) Ակնհայտ է այն հեղինակությունը, որ վայելում էր Ֆրանսիան XIX դարում՝ որպես եվրոպական քաղաքակրթության ու առաջընթացի կենտրոն: Գիտության, գրականության ու արվեստի բնագավառներում ֆրանսիացի հեղինակների գործերի կշիռն ու տարածվածությունը անժխտելի փաստ էր: Առանձնապես զգալի էր մտավոր ու քաղաքական ազատության վերաբերյալ ֆրանսիական գրականության ու հրապարակախոսության մեջ արժարժեք ունեցող գաղափարների ներգործությունը, որը պայմանավորված էր նաև ժամանակի պատմական իրավիճակով, երբ արևմտահայությունն ազգային-ազատագրական պայքար էր մղում թուրքական բռնակալության դեմ: Հիշենք Զեյթունի 1862, 1877—78 և 1895 թթ. հերոսական ապստամբությունները, որոնք հուզումներ ու բողոքի ցույցեր առաջացրին ամբողջ Արևմտյան Հայաստանում (Վանում, Մուշում, էրզրումում, Կ. Պոլսում և այլուր): Ֆրանսիական երեք հեղափոխությունները (1789—1799 թթ., 1830 թ. և 1848 թ.) աննախագեղ հետաքրքրություն և հիացմունք էին առաջացրել միջազգային ասպարեզում, շարժել ճնշված ժողովուրդների համակրանքը: Այս պայմաններում բնական էր, որ պետականությունից զուրկ ու թուրքական տիրապետության տակ գտնվող, սակայն նորի ու առաջավորի ձգտումներով տոգորված արևմտահայությունն իր հայացքը պիտի ուղղեր Նվրոպա, քանի որ XIX դարի կեսերին Թուրքիան գտնվում էր «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանում»⁸:

⁷ Նույն տեղում, էջ 572:

⁸ К. Маркс и Ф. Энгельс. Сочинения. Изд. второе, том 9, М., 1957, с. 6.

3) Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ անցյալ դարի երրորդ քառորդում հայ գեղարվեստական գրականությունը, հատկապես արևմտահայ արձակը թույլ զարգացում ունեցավ: Մինչդեռ, խիստ կերպով զգացվում էր աշխարհաբարով գրված արձակ գրականության պակասը: Այդ պակասը լրացնելու եկան եվրոպացի և հատկապես ֆրանսիացի հեղինակների վեպերի բազմաթիվ թարգմանությունները: Պատահական չէ, որ դրանց մեծագույն մասը հրատարակվեց հենց այդ շրջանում:

«Դարաշրջանի հասկացությունը խիստ էական է թարգմանությունների դերի ճիշտ գնահատման համար: Ժողովուրդների մշակույթի պատմության մեջ հայտնի են շրջաններ, երբ թարգմանությունները գիտելիքների տարածման ու մայրենի գրական լեզուների կատարելագործման կարևորագույն միջոց են դիտվել», — գրում է Ռ. Բուդաղովը⁹:

Դրական-մշակութային այսպիսի ազդեցության առկայությամբ էլ պայմանավորվեց ֆրանսերեն լեզվի ազդեցությունը գրական հայերենի վրա: Այս կապակցությամբ տեղին է հիշել Օ. Եսպերսենի կարծիքը, որի համաձայն լեզվական փոխազդեցությունների մեջ առաջնային դեր է խաղում ոչ այնքան երկու ժողովուրդների անմիջական շփումը, որքան նրանց կապը մշակույթի, գրականության և մանավանդ թարգմանչական գործունեության բնագավառներում¹¹: Հիշենք մշակութային առաջատար լեզուների ավանդը ընդհանուր քաղաքակրթության մեջ (սանսկրիտ, հունարեն, լատիներեն, չինարեն, նոր շրջանում՝ ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, անգլերեն և այլն) և այն, որ «միայն նվաճմամբ ձեռք բերված ազդեցությունը խոր և տևական չէ, մինչդեռ մշակութայինը՝ ընդհակառակը»¹²:

Ինչ վերաբերում է նշված ժամանակաշրջանում հայոց լեզվի փոխառելու, թե՛ թարգմանելու կամ պատճենելու միտումին, ապա այստեղ արտաբերական գործոններից կարևոր դեր են խաղացել՝ ա) ինքնուրույն պետականություն չունենալն ու օտար տիրապետության տակ ապրելը, բ) փոքր ժողովուրդ լինելու փաստը և գ) չձուլվելու մղումով ազգային լեզուն անաղաղապահելու անհրաժեշտությունը:

Արտաբերական գործոնների ազդեցությունը մեծ մասամբ երևան է գալիս այն ժամանակ, երբ տվյալ լեզվի համակարգում դրա համար կան որոշակի նախադրյալներ: Այս առումով սխալ կլինեի փոխառությունների կամ պատճենումների պատճառները փնտրել միայն լեզվից դուրս և սահմանափակվել դրանով:

Բառափոխառությանը նպաստող ներլեզվական գործոնների թվին դասել ենք՝

1) Փոխառու լեզվում որևէ նոր հասկացություն արտահայտելու համար համապատասխան բառի բացակայությունն ու տվյալ պահին սեփական միջոցներով համարժեք ստեղծելու անհնարին կամ ոչ նպատակահարմար լինելը, որն, անկասկած, ներլեզվական գործոններից հիմնականն է, առաջնայինը: Սրանով է պայմանավորված ուսումնասիրված տեքստերում, թարգմանություններում և մանավանդ բառարաններում տեղ գտած փոխառությունների զգալի մասը՝ իսթալ—(իդեալ)—idéal, մեդալիոն (մեդալիոն)—médaille, ֆինանս—finance, ֆոն(ֆոն)—fond և այլն:

Լեզվի ներքին միջոցներով համարժեք ձևեր ստեղծելու կարելիության կամ անկարելիության խնդրում որոշիչ նշանակություն է ստանում օտար բա-

⁹ Հայ նոր գրականության պատմություն. հ. 2, Երևան, 1962, էջ 46—47: Տե՛ս նաև՝ Մ. Անանիյան. Քննական ուսումնասիրություններ. Նյու Յորք, 1932, էջ 237—238:

¹⁰ Р. А. Будагов. Литературные языки и языковые стили. М., 1967, с. 252.

¹¹ О. Jespersen. Language: its nature, development and origin. London, 1934, p. 210.

¹² Զ. Ահառյան. Իրական քերականություն հայոց լեզվի. Ներածություն. Երևան, 1955, էջ 371:

ուի թարգմանելիության կամ անթարգմանելիության պարագան: Որպես ընդհանուր կանոն, հատուկ անուններից բացի թարգմանության ենթակա չեն նաև տարբեր գաղափարախոսությունների, ուղղությունների ու դպրոցների, քաղաքական և այլ խմբավորումների ու դրանց հետևորդների անվանումները՝ ժազդալեն (յակոբին), ժիբոնդիզմ (ժիրոնդիզմ), Ելպեթստ (հեբերտիստ), ոսմանթիֆ (ոսմանտիկ) և այլն: Անթարգմանելիության պարագան հատկապես շեշտվում է տվյալ ներկրի ու ժողովրդի ներկա կյանքին ու կենցաղին կամ անցյալին յուրահատուկ հասկացություններ արտահայտող բառերի փոխառության մեջ: Տարբերկրյա իրողություններ ցույց տվող այս բառերին բնորոշ է ընդգծված տեղային երանգավորումը, որի պատճառով դրանց պատճենումը կամ թարգմանությունը գրեթե անհնար է դառնում: Բացառություններ, երբեմն, հանդիպում են, սակայն այս դեպքում բառը մեծ մասամբ կորցնում է արտահայտչականությունը, նրա իմաստն աղոտանում է, իսկ հաճախ ուղղակի աղավաղվում: Ուսումնասիրված գրականության մեջ այս կարգի բառերը հիմնականում փոխառվել են և ոչ թե թարգմանվել կամ պատճենվել: Այսպես, կրիզեթ (գրիզետուհի)—griselte, թեթևաբարո աղջիկ արհեստավորական խավերից, տրենիե (դրենիե)—denier, ֆրանսիական հին պղնձեդրամ, ֆարմանեօլ (կարմանյուլ)—carmagnole, 1793 թ. հեղափոխականների երգ ու պար, ֆլորեալ (ֆլորեալ)—Floréal, ֆրանսիական հանրապետական օրացույցի ութերորդ ամիսը և այլն:

2) իմաստային տարբերակում ու ճշտում մտցնելու նպատակով այս կամ այն ընդհանուր հասկացությունը մասնավորելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ գարապին (կարաբին)—carabine, զենքի տեսակ՝ ակոսավոր փողով կարճ հրացան, ֆրեկաթ (ֆրեգատ)—frégate, նավի տեսակ՝ եռակայմ ռազմանավ և այլն:

3) Մեկ հասկացության համար մեկ բառ գործածելու պահանջը, որի պատճառով որոշ դեպքերում մայրենի նկարագրական ձևի դիմաց նախապատվություն է տրվում փոխառությանը: Այստեղ պարզորոշ ի հայտ է գալիս լեզվական տնտեսման միտումը, որն, անշուշտ, չի կարելի չարաշահել: Օրինակ՝ կոնկլավ—conclave, կարդինալների ժողով, որ գումարվում է պապ ընտրելու համար, վեթերան (վետերան)—vétérari, հինավուրց դինվոր, բազմաթիվ ճակատամարտերի մասնակցած ռազմիկ և այլն:

4) Բառապաշարային միասնությունների հաղորդակցային հստակությունն ապահովելու պահանջը, որ երևան է գալիս մայրենի բառի բազմիմաստության կրճատման կամ վերացման, նրա իմաստային կառուցվածքի պարզեցման մեջ: Այսպես, մեթադ բառի գործածությամբ պարզեցում է մտցվում մայրենի ճեղքանակ՝ բազմիմաստ բառի իմաստային կառուցվածքի մեջ, վերջինս ազատվում է ավելորդ ծանրաբեռնվածությունից, և միաժամանակ ապահովվում է հաղորդակցային հստակությունը: Վ. Հյուգոյի «Թշվառներ» վեպում մեթադը ֆանդիպում է ռասավանդման եղանակ, կերպ՝ նշանակությամբ: Ունենալով գործածության այսպիսի որոշակի շրջանակ, մեթադ բառը միաժամանակ հումանշային կապի մեջ է մտնում մայրենի ճեղքանակ՝ բառի հետ:

Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ գործոնները լրացնում և հաճախ այս կամ այն չափով ծածկում են միմյանց: Բազմիմաստությունից խուսափելու միտումն անմիջականորեն կապվում է իմաստային տարբերակում ու ճշտում մտցնելու ձգտման հետ կամ, ասենք, փոխառությունը որոշ դեպքերում նախապատվություն է տրվում մայրենի նկարագրական ձևի դիմաց, քանի որ տվյալ հասկացությունն արտահայտելու համար փոխառու լեզուն համապատասխան բառ չունի և համարժեք ստեղծելու պատրաստ չէ և այլն:

Բացի վերոհիշյալից, բառափոխառությանը նպաստող ներլեզվական գործոնների թվին պետք է դասել խոսքն արտահայտչական դարձնելու անհրաժեշտությունը (որը մեծ մասամբ երևան է գալիս ոճական հումանիշների գործածության մեջ և հաճախ վիճելի է), մայրենի միավորի համեմատությամբ օտար միավորի կարճությունը, մայրենի բառից ածանցավոր ու բարդ ձևեր կազմելու դժվարությունը կամ անհնարին լինելը, երբ օտար բառն այս կող-

մից ավելի կենսունակ է և այլն: Վերջիններս, սակայն, որոշիչ չեն եղել ֆրանսերենից փոխառություններ կատարելիս:

Փոխառությունն արգելակող և թարգմանությունն ու պատճենումը խթանող ներլեզվական կարևոր գործոն ենք համարում լեզվական ավանդույթը, որը ձևավորվելով դեռևս հունարան դպրոցի գործունեության շրջանում, պահպանվեց հայոց լեզվի զարգացման հաջորդ փուլերում ու նոր թափ ստացավ XIX դարում: Լեզվական ավանդույթն այնքան ուժեղ է, որ փոխառված ևս նույնիսկ որոշ ժամանակ գործածված շատ բառեր հայոց լեզվի պատմության տարբեր շրջաններում պարբերաբար փոխարինվել են ներքին բառակերտմամբ ստեղծված միավորներով:

Լեզվաբանական ուսումնասիրություններում հաճախ նշվում է, որ օտար բառեր գործածելու պատճառ են դառնում անհատի ճաշակը, նախասիրությունները, մտայնությունը, մեղմասությունների պահանջը, նորածե կամ կիրթ երևալու հակումը, ցուցամոլությունը և այլն: Վերջիններս նպատակահարմար ենք համարում կոչել անհատական-հոգեբանական բնույթի գործոններ: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում անհատական-հոգեբանական բնույթի գործոնների դերն աննշան է եղել, մի փաստ, որ միանգամայն օրինաչափ պետք է համարել, քանի որ արևմտահայ գրական աշխարհաբարի մշակման խնդրում կար մեկ միասնական վերաբերմունք՝ նրա զարգացումը տանել ինքնուրույն, ամեն տեսակի օտար ազդեցությունից ազատ ուղիով: Նման դիրքորոշումն առավել ևս բնականոն է թվում, երբ նկատի ենք առնում այն բացասական ազդեցությունը, որ թողել էր արևմտահայերի լեզվի վրա թուրքերենը, և որի մասին այնքան վրդովմունքով է խոսել անցյալ դարի հայ նշանավոր լեզվաբան Ա. Այտընյանը¹³: XIX դարի առաջին 40-ամյակում արդեն սկսվել էր արևմտահայ աշխարհաբարը կանոնավորելու և առաջին հերթին օտար բառերից ազատելու աշխատանքը: Պարզ է, որ այսպիսի իրադրություն մեջ խոսք չէր կարող լինել անհատական բնույթի ինչ-որ նախասիրությունների, ճաշակի, մտայնության և այլնի մասին: Օտար տիրապետության պայմաններում շատ խիստ էր դրված ազգային լեզվի պահպանման հարցը: Հայ մտավորականն աշխատում էր առավելագույնս թարգմանել ու պատճենել, վերաիմաստավորելով օգտագործել հայերեն բառերը և փոխառությունը հասցնել նվազագույնի: Այս սկզբունքը երբեմն հասնում էր ծայրահեղության, որն արդարացվում է ժամանակի իրավիճակով, գրական արևմտահայերենի զարգացման ուրույն պայմաններով:

Այսպիսով, հայտնի դրույթն այն մասին, թե փոխառությունն ընդհանրապես արդարացվում է պահանջով, չպետք է միանշանակ ընկալվի ու մեկնաբանվի, քանի որ այդ պահանջը երկբնույթ է՝ լեզվական և անհատական: Եվ ինչպես ցույց են տալիս տարբեր լեզուների ու մասնավորապես հայերենի տվյալները, հիմնականն ու որոշիչը ոչ թե անհատական, այլ բուն ներլեզվական պահանջն է, որն էլ կանխորոշում է փոխառությունների մեծագույն մասի մուտքն ու հետագա յուրացումը:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի լեզուների ծագումնաբանական բնույթի տարբերություններն ու տարբերությունները, քանի որ այլ կարգի միատեսակ պայմանների դեպքում, ծագումնաբանական ընդհանրություններ ունեցող լեզուներն ավելի շատ փոխառում են միմյանցից, իսկ տարբերություններ ունեցողները՝ թարգմանում ու պատճենում: Առաջին դեպքում, մանավանդ մոտ ցեղակցության պայմաններում, փոխառու և փոխառու լեզուների բառույթներն ունեն ընդհանրություններ, բաղադրիչների միատեսակ կամ նման անվանումներ, որն ընկալելի է դարձնում բառի պատճառաբանվածությունը, նրա ներքին ձևը, հետևապես՝ իմաստը: Այս հանգամանքն էլ դուրացնում ու առաջ է մղում փոխառությունը: Երկրորդ դեպքում՝ այսինքն՝ ոչ

¹³ Ա. Այտընյան. Քննական քերականություն. աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի. Վիեննա, 1866, էջ 232:

ցնդակից կամ հեռավոր ցնդակից լեզուներում, որոնցում ընդհանուր տարրերի քանակը փոքր է կամ հավասար զրոյի, ընդհակառակը, պատճենումն ու աղատ թարգմանությունն են դառնում առաջնային, քանի որ փոխառությունը հանդես է գալիս որպես չպատճառաբանված միավոր, որն, ինչ խոսք, անհամեմատ դժվար է յուրացվում կամ ընդհանրապես չի ներդաշնակվում փոխառու լեզվի բառապաշարին ու բառակազմությանը, հնչյունական ու իմաստային համակարգերին:

Հայտնի է, որ հայերենն ու ֆրանսերենը հնդեվրոպական հեռավոր ցնդակից լեզուներ են: Եթե նաև նկատի ունենանք, որ XIX դարում ֆրանսիացիների հետ հայերի անմիջական շփումները սահմանափակ էին ու ծավալուն, ապա պարզ կդառնա, որ հայ-Ֆրանսիական լեզվական կապերի մեջ պիտի գերիշխեին թարգմանությունն ու պատճենումը, քան՝ փոխառությունը:

Վերջապես, որոշիչ դեր են խաղում փոխառու լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները:

Հայոց լեզվի համար պետք է էական համարել բառակազմության բնագավառում նրա ունեցած բացառիկ ճկունությունը՝ բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությունը, ածանցների հարստությունը, բառաբարդման ու բառածանցման գրեթե անսահմանափակ հնարավորությունները: Այս կապակցությամբ հիշենք էդ. Սեպիրի այն դիտողությունը, թե օտար բառերն ավելի հեշտ են թափանցում ու ամրանում այն լեզուներում, որոնցում գերակշռում են համաժամանակյա մոտեցմամբ ձևաբանական տարրաբաժանման շենթարկվող բառերը, ի տարբերություն բառածանցման ու բառաբարդման գործում միջոցներով հարուստ լեզուների, ուր մեծ մասամբ նկատվում է օտար բառը թարգմանելու կամ պատճենելու հակում¹⁴: Առաջին կարգի լեզուների օրինակ կարող է ծառայել անգլերենը, երկրորդի՝ գերմաներենը, հայերենը: Եվ պատահական չէ, որ եթե անգլիացու համար բառի ձևաբանական վերլուծությունը ենթագիտակցորեն անխուսափելի մի անդրադարձ (ռեֆլեքս) չէ, ապա գերմանացու կամ հայի համար դա այդպես է:

Լեզվի զարգացման որոշակի փուլում նոր հասկացություններ արտահայտելու համար օտար լեզուներին դիմելու անհրաժեշտության պայմաններում հաճախ զուգահեռաբար առաջանում են բառափոխառությանը հակադրող ուժեր, որոշակի աշխուժություն է նկատվում մայրենի լեզվի իմաստային համակարգում և հատկապես բառակազմության մեջ: Այս դեպքում էդ. Սեպիրի նշած երկրորդ տիպի լեզուներում այդ աշխուժությունն, անկասկած, անհամեմատ մեծ է, իսկ փոխառությունների թիվն, ընդհակառակը՝ փոքր, մի հանգամանք, որ կարևոր նշանակություն ունի փոխառելու կամ պատճենելու հարցում հայոց լեզվի ընդհանուր միտումը ճիշտ գնահատելու և մեկնաբանելու համար:

Ի մի բերելով ասվածը, առանձնացնում ենք աբաղբայական, ներբաղբայական, անհատական-հոգեբանական, ծագումնաբանական և կառուցվածքային գործոններ, որոնք պայմանավորում են փոխառությունը կամ պատճենումը, նպաստում դրանցից որևէ մեկին կամ արգելակում այն:

Միաժամանակ ակներև է, որ վերոհիշյալ գործոններն իրենց էությամբ, ի վերջո, կամ լեզվական են, կամ՝ արտալեզվական:

Ֆրանս-հայերեն բառարանների և թարգմանական գրականության նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ XIX դարում և հատկապես նրա երկրորդ կեսին զգալի է եղել գրական արևմտահայերենի ֆրանսերենից կրած ազդեցությունը՝ որպես հետևանք այդ շրջանում ֆրանսիական գրականության ու մշակույթի հետ մեր ժողովրդի արևմտյան հատվածի ունեցած սերտ կապերի: Բառափոխառության մեջ գրական արևմտահայերենը զուսպ է եղել: Նշված շրջանին առավել հատկանշական է օտար բառերը

¹⁴ Э. Д. Сепир. Язык. М.—Л., 1934, с. 153—154.

Թարգմանելու և պատճենելու, ինչպես նաև օտար նշանակությունները մայրենի բառերին ապրու միառումը՝ պայմանավորված հայոց լեզվի կառուցվածքային առանձնահատկություններով, նրա ավանդույթներով, ինչպես նաև պատմական այդ ժամանակաշրջանում մեր ժողովրդի արևմտյան հատվածի հասարակական-քաղաքական կացությամբ:

ИЗ ИСТОРИИ АРМЯНО-ФРАНЦУЗСКИХ ЯЗЫКОВЫХ СВЯЗЕЙ XIX ВЕКА (Основные источники, способствующие и препятствующие факторы)

А. К. БАРЛЕЗИЗЯН

Резюме

В XIX веке наблюдается влияние французского языка на западно-армянский литературный язык, обусловленное общим влиянием французской литературы и культуры. Основными его источниками являются французо-армянская лексикография и богатая переводная литература. В статье выделяются экстралингвистические, внутрилингвистические, индивидуально-психологические, генетические и структурные факторы, которые способствовали или препятствовали заимствованию и калькированию французских лексико-семантических единиц. В указанном периоде наблюдается тенденция к переводу и калькированию, а не заимствованию. Она обусловлена богатством активно функционирующих способов словосложения и дериваций в армянском языке, его традициями, а также сложным общественно-политическим положением западных армян, сложившимися в эту историческую эпоху.